



Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Վ Կ Ա Յ Ե Ա Լ Կ Ա Ր Գ

▪ **ՆՊԱՏԱԿ**

Վկայեալ կարգի գիտելիքներու բովանդակութիւնը կը ներառէ բաւարար պաշար՝ ստանձնելու եւ ղեկավարելու համար սկաուտական խմբաւորում մը, ուր թեկնածուն պարտի ինքնաշխատութեամբ, գործօն մասնակցութեամբ եւ փորձարկումով գործադրել իր ստացած բոլոր նիւթերը:

▪ **ՊԱՅՄԱՆՆԵՐ**

1. Նուագագոյնը մէկ տարուայ Ա. Կարգի սկաուտ ըլլալ:
2. Նուագագոյնը 16 տարեկան ըլլալ:

▪ **Ա. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ**

1. Գիտնալ եւ մեկնաբանել Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան նպատակը:
2. Ծանօթանալ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի օրէնքներուն եւ ըմբռնել անոր մասնակցութեան հասկացողութիւնը, ինչպէս նաեւ՝ ժողովավարական եւ վարչական օրէնքները:
3. Գիտնալ եւ մեկնաբանել միութեան եւ սկաուտական ներքին կանոնագիրները:
4. Ծանօթանալ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան կարեւոր հանգրուաններուն, գաղափար ունենալ գործող բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու մասին, գիտնալ իր Շրջանի ամբողջական պատմութիւնը:

▪ **Բ. ԱԶԳԱՅԻՆ**

Ծանօթանալ ստորեւ յիշուած առաջին 10 նիւթերուն, ապա ըստ նախասիրութեան ընտրել անոնցմէ մէկը եւ լաւապէս սերտելէ ու ուսումնասիրելէ ետք, ներկայացնել խումբի անդամներուն:

1. Հայկական Հարցը

ա. Թրքահայաստանի կացությունը ԺԹ: դարուն

բ. Հայկական զարթոնքը

գ. Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրերը

դ. Մեծ տերությանց քաղաքականությունը Օսմանեան կայսրության հանդէպ

ե. Համիդեան ջարդերը

2. Հայ յեղափոխական շարժման ծնունդը եւ կուսակցություններ/հիմնական դէմքեր ու դէպքեր.-

ա. 1880ական թուականի յեղափոխական խմորումները

բ. Արմենական կուսակցությունը

գ. Հնչակեան կուսակցությունը

դ. Հայ Յեղափոխականներու Դաշնակցությունը

ե. Ռամկավար Ազատական Կուսակցությունը

3. Երիտասարդ թուրքերու յեղափոխությունը եւ հայ ժողովուրդը Համաշխարհային պատերազմի նախօրեակին.-

ա. Երիտասարդ թուրքերու թրքացման քաղաքականությունը

բ. 1913-1914 բարենորոգումներու ծրագիրը

գ. Համաթրքությունը եւ համաթուրանականությունը

4. Հայկական Յեղասպանությունը եւ Կիլիկիոյ պարպումը (1915-1923)

5. Անդրկովկասի ինքնապաշտպանություն - Հայաստանի Հանրապետության հիմնադրություն - Մերի Դաշնագիր:

6. Լոզանի Դաշնագիր:

7. Խորհրդային Հայաստան:

8. Հայ Սփիւռք/իրավիճակ/գաղութի ներկայի հարցեր:

9. Անկախ Հայաստան:

10. Ղարաբաղեան Շարժում, 1988էն մինչեւ օրս:

11. Ըմբռնել եւ փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտին դերը Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն մէջ:

▪ **Գ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ**

1. Ծանօթանալ Համաշխարհային սկաուտութեան պատմութեան եւ կառոյցին: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի դերը համաշխարհային կառոյցին մէջ:
2. Հետապնդել ու կիրարկել սկաուտական գործելակերպի 4 հիմնական սիւները՝ նոր ձեւեր որդեգրելով.-
ա. Խոսարում եւ դասանանք
բ. Խմբակային դրութիւն
գ. Սկաուտական կարգեր եւ մասնագիտական պէճեր
դ. Բնութեան մէջ գործունէութիւններ
3. Ծանօթանալ, սերտել եւ ուսումնասիրել խմբակի, խումբի եւ միաւորի դրութեան կարեւորութիւնը եւ գործելակերպը:
4. Խումբի աստիճանաւորական ժողովի եւ միաւորի խմբապետական ժողովի կարեւորութիւնը եւ հանգամանքը:
5. Մասնագիտանալ շտապ օգնութեան եւ անհրաժեշտ գիտելիքներու մէջ:
6. Կիրարկել սկաուտական գործունէութիւններ քննարկելու եւ արժեւորելու եղանակը:
7. Ընթրնել փոխ յարաբերութիւններու հասկացողութիւնը (Խմբապետ /Փոխ Խմբապետ/ Վ.Առաջնորդ / Ծնողք):
8. Ընթրնել խմբապետը իբր ղեկավար հասկացողութիւնը (խումբ վարել, խմբապետը իբր դաստիարակ):

▪ **Դ. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ**

1. Ծանօթանալ միջազգային կազմակերպութիւններու՝ Մ.Ա.Կ., Եւրոխորհուրդ, Եւրոմիութիւն...:
2. Ծանօթանալ վարչակարգերու (ընդհանուր եւ տեղական):
3. Գործադրել քաղաքացիական դաստիարակութիւնը (կրկնակ պատկանելիութեան հարց):
4. Ճանչնալ մարդկային իրաւունքներ:

▪ **Ե. ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ**

1. Ճանչնալ քարոզչութեան միջոցները:
2. Ուսումնասիրել վարուելակերպի հարցեր եւ տարիքային առանձնայատկութիւններ:

3. Գործել արդի դաստիարակչական միջոցներով (communication skills, effective teaching, motivation, evaluation – նիւթ փոխանցել ու ներկայացնել, միջոցներ արժեւորում):
4. Ըմբռնել բարոյականութեան հասկացողութեան կարելորութիւնը:

▪ **Ձ. ԿՐՕՆԱԿԱՆ**

Ճանչնալ՝

1. Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութիւնը եւ նուիրապետական աթոռները:
2. Յարանուանութիւնները:
3. Կրօնական դաստիարակութեան կարելորութիւնը եւ միջոցները:
4. Աղանդները եւ անոնց վտանգը:

**Վաւերացուած Կեդրոնական Վարչութեան
Բ. Լիագումարին (2էն 5 Սեպտեմբեր 2008)
Երեւան-Հայաստան**